# «ԴԱՐՔ ԳՐԱՆԻՏ»
# ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Լոռու մարզ, Շահումյան 1-ին փողոց, տուն 7

N ԴԳ-19/01

«08» ապրիլի 2019թ.

ՀՀ բնապահպանության նախարար
պարոն Էրիկ Գրիգորյանին

Հարգելի պարոն նախարար,

ՀՀ Լոռու մարզի Մեծ Սարի գրանոդիորիտների հանքաերևակման տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու նպատակով 12.06.2018 թվականին լիազոր մարմնի հետ կնքած օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ Պ-273 պայմանագրի 4.4 կետի.4.4.11 ենթակետի համաձայն մեր ընկերությունը պարտավոր է ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Հայտնում եմ Ձեզ, որ ֆինանսական դժվարությունների հետ կապված ընկերությունը 2018 թվականին հորատանցքեր չի փորել և մաքրվածքներ չի անցել, ուստի բնապահպանական կորուստներ տեղի չեն ունեցել: Նշված աշխատանքները նախատեսում եմ իրականացնել 2019 թվականի մայիս-հունիս ամիսներից՝ հաշվի առնելով լեռնային շրջաններում ձյունածածկույթի առկայությունը:

Հարգանքով՝

«ԴԱՐՔ ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ տնօրեն Ա. Մնացականյան

ՀՀ բնապահպանության
նախարարության աշխատակազմի
Փաստաթղթաշրջանառության ընդհանուր
բաժին
Մուտք N 32908
«12» 04 2019թ.